

ՄԱՅԻՍ

Տարեկան դինը 10 րուր, կէս տարվանը 6 րուր:
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրվում են միմիայն Կաթողիկոսան մէջ:

Ոտարարտարացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция «Мусако»

Կաթողիկոսանը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի եւ տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարում են
խորանային թաւին 2 կոպէկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ

Լուսաւորութիւն եւ անտեսական ուժ:—Ներ-
քին ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նամակ խմբագրին: Նամակ
Ղաթալից: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ: Ֆրանսիա: Նամակ Ֆրանսիայից: Նամակ
Թիւրքիայից:—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀԵՌԱՎԻՐՆԵՐ:
—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ԼՈՒՍԱՐԱՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՏԵՍՏԱՔԱՆ ՈՅԺ

II

Անկախած հայի նիւթական գործիւնը
կապահովէր, նրա անձնական եւ ընտանեկան
պատիւը, նրա սեփականութիւնը պաշտպան-
ված կը լինէին, եթէ թիւրքաց չայաստա-
նին տրվէր մի որ եւ է ինքնավարութիւն
թիւն:

Բայց ինչպէս հասնել այդ նպատակին:
Արդեօք թիւրքացի հայը պէտք է սպա-
սի այդ շնորհը թիւրքացից եւ Եւրոպայից,
ինչպէս երկրից թափող մանանայի, թէ
ինքն էլ մի բան պէտք է անի իր այդ ցան-
կացած ինքնավարութիւնը իր հայրենիքի
համար ձեռք բերելու:

Մինչեւ այժմ հայը իրանից ոչինչ չէր
անում իր այդ ցանկացած նպատակին հաս-
նելու համար, այլ ամէն բարիք սպասում
էր դիւանագիտական յարաբերու-
թիւններից: Եւ մինչեւ անգամ այդ դիւա-
նագիտական ճանապարհում նա շատ թոյլ
եւ անպատրաստ գտնվեցաւ:

Քիւրդերը կողոպտում էին հային,—նա
ուրիշ ազգերի պէս ինքն իր անձը չէր պաշտ-
պանում, բայց աղերսագրեր էր ներկայաց-
նում: Թիւրքը պաշտօնեան ճշնոյթ, հարս-
տահարում էր հային, խլում էր նրանից
նրա կալուածները, նրա սեփականութիւնը,—
հայը դրաւոր բողոքներ էր տալիս Բ. Դրանը:
Թիւրքը, մահմեդական ազգաբնակչութիւնը
թշնամար էր վերաբերվում դէպի հայ
տարրը,—հայը գանգատվում էր Եւրոպային:
Հայից հարցնում էին՝ արդեօք մեծ է ազ-
գութեանդ թիւը հայրենիքումդ, — հայը
զրդված կրօնական մոլեռանդութիւնից, մի
աննշան թիւ էր ցոյց տալիս, որի մէջ յիշ-
ված էին միմիայն հայ լուսաւորչականները
եւ մուսուլման էին հայ-կաթողիկոսները, հայ-
բողոքականները, հայ-յուզապետները,
հայ մահմեդականները, հայախօս եղբիւ-
րներ ու ասորիները, հայախօս քրիստոնէի
մի քանի ցեղերը...

Հայը ներկայացաւ եւ Բերլինի աւագա-
ժողովը եւ այդտեղ էլ ցոյց տուց իր նեղ-
հայեաց եւ դիւանագիտական գործին ան-
պատրաստ լինելը: Նա խօսեց հայի, լու-
սաւորչական հայի կողմից միայն, ուղար-
կեց միմիայն հայ արեղաներին իր դատը
պաշտպանելու համար եւ անընդունակ եղաւ
առհասարակ հայաստանցու անունով
խօսելու, չը կարողացաւ պահանջել չայաս-
տանի, որպէս մի ամբողջ նահանգի
համար ինքնավարական իրաւունքներ: Նա
նախ պէտք է համբարշտութեան կապերը
հաստատէր չայաստանի բոլոր ազգաբնա-
կութիւնների մէջ, առանց ցեղի եւ կրօնի
խտրութեան,—եւ այնպէս ներկայանար Բեր-
լինի կօնգրէսը: Նա այդ էլ չարտաւ:
Ուրեմն գիւնապիտակեան ճանապարհով

գործելու, ինքնավարութիւն պահանջելու
համար, դարձեալ պէտք է կատարվէր մի
ահագին պատրաստական աշխատանք:

Նախ եւ առաջ հայերը պէտք է ոչ թէ
միայն ընտելանային բոլոր աշխարհի հայե-
րին հայ համարի, բայց եւ հայաստանցի
համարը չայաստանում բնակվող բոլոր ցե-
ղերին, իրանց նիւթական, անտեսական եւ
հասարակական շահերը նրանց հետ համե-
րաշխ համարելով:

Ի՞նչ են այն ընդհանուր շահերը, այն
համբարշտութեան կապերը, որոնք կարող
են զարգանալով, կապել, հայաստանցի բոլոր
ազգերին հայերի հետ: Անտարակցայ լուսա-
ւորչական կրօնը եւ ոչ մի կրօն չէ կարող
այն ցեղին տ լինել, որ բոլոր հայաստան-
ցիներին ձուլէր մի ազգային գանգաւածի
մէջ: Ինչքան էլ հայ-լուսաւորչականը իր
կրօնը գերադանց համարէր աշխարհիս
բոլոր միւս կրօններից, նա բունի կերպով
չէ կարող ստիպել որ բողոքականը, կաթո-
լիկը, յուսաւորչականը, մահմեդականը այդ
կրօնը ընդունէին: Պէտք է որոնել ուրիշ,
ամենքի համար ընդհանուր շահ ներկայա-
ցնող կէտ, մի չէզոք դեպք, որի վրա բո-
լոր հայաստանցիներն էլ միանալով՝ կարող
էին համբարշտ ոգով գործել ընդհանուր
հայրենիքի բարեօրոշման գործի համար:

Այդ կէտը մի քանիսն են ընդունում են
ուսում: Մենք դրա դէմ ոչինչ չունենք, թէ
կուզ այդ ուսումն էլ լինէր հայերէն լե-
զուով. այդ ուսումից չէին խորշի, թէ եւ
նա հայերէն լեզուով մատակարարվէր, հայ-
լուսաւորչականի հետ միասին եւ հայ-բո-
ղոքականը եւ հայ-կաթողիկոսը եւ հայ-յուզա-
պետը եւ հայախօս մահմեդականների
բազմութիւնը: Ուրեմն ուսման համար կօն-
տինգէնտ արդէն պատրաստ էր եւ բաւա-
կան բազմութիւն էր: Բայց հարցը դրա-
նումն է թէ ի՞նչ ուսում: Նախ եւ առաջ
մենք ուսում, լուսաւորութեան տարածումն
բաւով չենք ընդունում միմիայն դպրոց-
նէր, այլ լուսաւորութեան գործիչներից
ոչ պակաս զօրեղներն են՝ լսարանները, դը-
րականութիւնը, մամուլը եւ մինչեւ անգամ
թատրօնը: Բայց երբ ուսում, լուսաւորու-
թիւն բաւով ընդունվում է միմիայն դըպ-
րոց, տարրական ուսումնարան, որտեղ ու-
սուցանում են կարգալ, գրել, կրօն, հաշիւ
եւ քերականութիւն,—պարզ է որ այդ տե-
սակ ուսում անկարող էր գրաւել չայաստա-
նի աշխարհաւ եւ այլացել ազգերին: Այդ
բաւական չէ. նա չէր կարող գրաւել եւ
նոյն իսկ հայ-լուսաւորչականների մեծա-
մասնութիւնը: Մարդկութիւնը այնպէս է
ստեղծված, որ նրա մէջ իդէալական կողմը
առհասարակ շատ քիչ է զարգացած եւ շատ
ուշ է զարգանում: մարդիկ մեծ մասամբ
մեծ թէ փոքր գործեր են անում, դէպի
լաւը, կամ դէպի վատն են ընթանում:
դրդված լինելով դրական, նիւթական շա-
հերից, կենսական պահանջներից:

Առեղծ է խորում, ի՞նչ շահ, ի՞նչ դրա-
ւիչ ոյժ կարող էր ներկայացնել այլախրօն
եւ այլացեղ հայաստանցու համար մի հա-
յոց դպրոց, որի դրական հետևանքը, գործ-
նական արդիւնքը նա չէ տեսնում, որ սո-

վորեցնում է միմիայն դրագիտութիւն,
առանց սովորեցնելու մի որ եւ է
արհեստ, որ կարող էր գործ գրված լի-
նել կենքի մէջ:

Մենք չենք հերքում ուսման, դրագիտու-
թեան օգուտը եւ անհրաժեշտութիւնը,
մենք այն ծայրայեղութեանը չենք հասնի
որ քարոզէինք թէ թող հայը անգրագէտ,
աղէտ լինի, միայն թէ արհեստով պարա-
պի: Ոչ. բայց մենք լոկ տարրական ու-
սումը անբաւականացուցիչ ենք համա-
րում, եթէ նոյն դպրոցներում, կամ այդ
դպրոցներին կից այլ դպրոցներում միացած
չը լինի ուսումը արհեստի կամ երկրագործու-
թեան ուսման հետ: Մենք աւելի կասենք.
ուսումնարանը ինչքան էլ արուեստագոր-
ծական խիստ ուղղութիւն ունենայ, այն
օգուտը չէ կարող տալ թէ հային եւ թէ
հայաստանցի միւս ազգերին, մտեցնելով
նրանց եւ միացնելով նրանց ընդհանուր շա-
հերը, որքան արուեստանոցն էր,
Ֆաբրիկան էր, արուեստագործ-
ական եւ արգիւն արհեստական
ընկերութիւններ:

Մի արհեստանոց որ նորերումն հիմնվե-
ցաւ վանում մի մասնաւոր մարդու ձեռ-
քով, գուցէ բուն անձնական շահերի նպա-
տակով, որի մէջ պատրաստվում են բըր-
դեայ կերպաններ, եւ որտեղ միատեղ բա-
նում են մօտ 200 բանուորներ խառն հա-
յերից, թիւրքերից եւ ասորիներից,—կարձ
ժամանակում աւելի կանի չայաստանի այլ եւ
այլ ցեղերից բաղկացած այդ խմբի մարդկանց
միմեանց մտեցնելու, քան թէ չայաստանի
բոլոր տարրական դպրոցները, մանաւանդ
եթէ այդ տեսակ արհեստանոցից օգուտ քա-
ղէինք եւ նրա բանուորներին աշխատանքից
ազատ ժամանակ թեթեւ դաստիարակութիւն
ներ անէինք այլ եւ այլ առարկանե-
րից, կամ դոնէ դրագիտութիւնը սովորեց-
նէինք, ինչպէս կիրակեայ դպրոցներում:

Եւ պարզ խօսենք. մի կողմ թողած չայաս-
տանի այլացեղ եւ այլախրօն ազգերին,
բայց նոյն իսկ հայերի դրութեան մէջ զըլ-
խաւոր չարիքը վերցնելու համար, այն է
գաղթականութեան սարսափելի հոսանքին
արգելիլու համար՝ արդեօք անգոր չը հան-
դիսացան ուսումը ծաւալող այն բոլոր դըպ-
րոցները, որոնք միմիայն դրագիտութիւն են
սովորեցնում հային:

Ուր մնաց թէ այդ դրագիտութեան դըպ-
րոցներով կարողանայինք հասարակական հա-
մբարշտութեան կայծ դրել հայաստանցի
բոլոր ցեղերի մէջ, երբ որ մեզ յայտնի է
որ ոչ թէ միայն այլացեղ ազգերը չեն
գրասվում հայոց այդ դպրոցներով, բայց եւ
այն ժամանակ երբ որ նրանց մէջ գտնվում
են պատահմամբ ցանկացողներ իրանց գա-
ւախներին հայոց ուսումնարաններին յանձնե-
լու,—այդ միջոցները չեն ընդունում նը-
րանց, նպատակ ունելով միմիայն հայերի
մէջ ուսում տարածելու:

Հետեւեալ յօդուածում կը խօսենք Կ.
Պօլսի եւ չայաստանի փոխադարձ յարաբե-
րութիւնների վրա:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 4 մայիսի

Ձեր լրագրի 78-րդ համարի «Հարկաւոր է մի
բարեգործական ընկերութիւն» առաջնորդող
յօդուածը ամբողջապէս վերաբերում է այն
հիմնարկութեան, որ պէտք է կրէ «Հայոց բարե-
գործական ընկերութիւն» տիպոսը:

Ձեր առաջնորդող յօդուածի նպատակն է, որ
հիմնվի մի բարեգործական ընկերութիւն,
մայրաքաղաքներում երկու, երեք կամ չորս
երեսասարդ կամ օրիորդ ուսանողներ պահելու
համար: Ահա ձեր առաջնորդող յօդուածի միտքը,
բայց որը համեմված է հայի յատկութիւնների
նկարագրութեամբ: «Մենք կամ ոչինչ չենք ա-
նում... ասում էք դուք, կամ եթէ ձեռնամուխ
ենք լինում մի գործի, չենք բաւականանում մի
որ եւ է համեստ, պարզ եւ նպատակայարմար ըն-
կերական կազմակերպութեամբ, այլ կամենում
ենք անպատճառ հիմնել մի այնպիսի ընդարձակ,
բաղադրեալ հիմնարկութիւն, որով ամբողջ աշ-
խարհը կարողանայինք զարմացնել, բայց որը
նոյն իսկ իր չափից դուրս մեծ, բաղադրեալ եւ
ընդարձակ լինելու պատճառով՝ անկարող ենք
իրագործել. նախ ընդունակ մարդկանց պակա-
սութեան պատճառով եւ երկրորդ ու գլխաւորա-
պէս այն պատճառով, որ մենք սովորութիւն
ունենք ոչինչ չը շինելուց, կատարեալ անգոր-
ծութիւնից անցնել յանկարծակի եւ մէկ անգա-
մով դէպի շատ լայն եւ ընդարձակ գործերը, փո-
խանակ նախ եւ առաջ ձեռք տալ փոքրիկ, հա-
մեստ, նպատակայարմար եւ օրական, կենսական
ամենաանհրաժեշտ պահանջներից բղխող ձեռ-
նարկութիւններին...» Բայց նրա (հայի)
նպատակը չէ, շարունակում էք դուք ձեր յօդ-
ուածը, գործը նայն իսկ գործի համար. նրա
նպատակն է հռչակել, իսկոյն մեծ, երեսիկ
մարդ դառնալ, գոնէ քանի մի օր շարունակ
առաջին դերը խաղալ հասարակութեան մէջ:

Պարոն խմբագիր, դուք ձեր «Հարկաւոր է մի
բարեգործական ընկերութիւն» յօդուածը գրե-
լուց չէիք կարող կասկածել, որ մի բանիմաց
հայ (ընդհանուր մտքով) չը հասկանար ձեր
յօդուածի ակնարկութիւնները՝ կշռի մի կողմը
զրկել էք ձեր առաջարկած մասնագիտական «բա-
րեգործական ընկերութիւնը» եւ ձեզ, իսկ միւս
կողմը հիմնելի «Հայոց բարեգործական ըն-
կերութիւնը» եւ նրա հեղինակը: Ձեր խօս-
քերով անհամեմատ մեծ ծանրութիւնը ձեր
կողմն է: Ձեր կողմն է ձեր առաջարկած
հիմնարկութեան յաջողութիւնը եւ նրա հեղի-
նակի խոսակցականութիւնը: Եւ ձեր խօսքերով ան-
տեղի է մի այնպիսի լայն եւ ընդարձակ հիմնա-
կութիւնը, որպիսին է, օրինակ «Հայոց բա-
րեգործական ընկերութիւնը» եւ նրա առաջար-
կով անմիտ բարձրաստութիւնը եւ անձնական
փառասիրութիւնը:

«Վատուի եւ մկան» խաղ չը խաղանք. ես հա-
ւատացած եմ, որ դուք ձեր այդ առաջնորդող
յօդուածը չէք գրել մայիսի 2-ի ձեր թերթի ա-
ռաջին երեսը լցնելու համար: Կուք իբրեւ հրա-
պարակախօս եւ խմբագիր մի այնպիսի լրագրի,
որ կողմն ունի լինելու հօր պաշտպան ազգիս
շահերի, անկեղծութեամբ կը ցանկաւ պար-
զելու այն հասարակական երևոյթները, որոնք
յատկապէս մեր ազգի վիճակին վերաբերեալ,
ունեն, ձեր խօսքերովը ասած չօրական, կենսա-
կան նշանակութիւն:

Ես եւ այլապէս չեմ մտածում, մանաւանդ
այնպիսի մի հարցի վերաբերեալ, որի մա-
սին, վաղուց չէ, անցեալ տարուայ ամ-
բողջ երեք առաջնորդող յօդուածներում՝ մա-
յիսի 27-ի, 28-ի եւ յուլիսի 18-ի «Մշակի» հա-
մարներում դուք ապկ էք ձեր խմբագրական
յօդուածները յատուկ տառերով, «Որովայ կեն-

սական հարց» վերնագրով։ Այդ յօդուածներէն վերջինք միայն մի քանի շարք. «Հասկացող, կրթեալ անձինք երբեք պակաս չեն մեր մէջ, ամեն տեղ, ամեն քաղաքում կը գտնուին նրանք. հարկաւոր է մի կազմակերպութիւն ունենալ, որպէս զի այդ բոլոր անձինքը գործեն մի ճանապարհով, նպատակաւորմար ճանապարհով».... Մեր կարծիքն է առանց քաջքնելու հարցը, հիմնել մի բարեկամական ընկերութիւն, բարոյապէս կապելու հայ բանիմաց անձինքներին, որոնք ամեն տեղ տիրած են և ներքին այդ ընկերութեան շնորհիւ, նրա անխնայ աշխատութեամբ հետզհետէ, քայլ առ քայլ մտնել ժողովրդի կորած, մոլորած անձինքներին մէջ կրթութեան և անտեսականութեան խնկարի փրկարար հիմունքը։ Այդպիսի մի ընկերութիւն մեծ համակրութիւն կը վայելէր կառավարութեան կողմէն և իր լայնատարած ճիւղերով և բազմակողմանի գործունէութեամբ կատարեալ հեղինակութիւն կը ստանար հասարակութեան մէջ։»

Բայց ես չեմ գարմանում և չեմ քստմնում այն հակաճառութեանց դէմ, որոնք ամենախիտ կերպիւ երևում են անցեալ տարւոյ միջակ երեք յօդուածներին և ձեր այս վերջին յօդուածին մէջ, վստահ, մէկի ստորագրութիւնն է Բ. Նաւասարդեանց, իսկ միւսինը Գ. Ա.

Հասարակութեան համար կարեւորութիւն ունի ճշմարտութիւնը։ ճշմարտութեանը չի յարմարիլ արդեօք, եթէ ձեր խօսքերի դէմ ասեմ, որ «ընդհանրապէս հայը նրանով է անբախտ, որ սովոր է չար չի ու թէ և ամբ պարպել» — այս սովոր վերջին յօդուածի մէջ, վաղը հինգ արշին հաշիւայ. միւս օրը տասը դաստայ թուղթ և ալլը.... հայը չունի լայն մտաւոր հորիզոն. նեղ է նրա ընտանեկան ազատութիւնը. նեղ է հասարակական կեանքը. նեղ է և խեղդուած նրա քաղաքական վիճակը. ստորով է նա իր բնիկ երկրում. ապա ունի նա և նեղ զաղափար ամեն մի կենսական երևոյթի վրա. ունի նեղ հասկացողութիւն հասարակական զարգացման, կարգերի և օրէնքների վրա։ «Մինչև ամպը չը որոտայ, հայը խաչ չի հանիլ»։ Բայց ձեր հաշուած իբր թէ արատութիւնը, եթէ նա լինէր, յիշուի մի տարածված յատկութիւն, կարող էր միայն պարծանք բերել հայ ազգին։ Մեր ազգիցը դեռ զարեւով բաժանված է այն չըջանը, երբ կը տիրէ ընդհանուր, հասարակական ֆօրմուլաներ, որի մէջ կը բովանդակուին զանազան մասնաւոր օրոտայ երևոյթներ, ինչպէս է երկու երեք ուսանող պահել Պետերբուրգում, մի թըղթակից արտասահմանում և այլն և այլն։

Բայց մենք առիթ էինք ունենայ մեր յօդուածը գրելու, եթէ դուք, պարոն խեղդի, բաւականացած լինէիք, ձեր առաջնորդող յօդուածի ճիշտ մի քառորդով, և երեք քառորդը նուրբած չը լինէիք քարկոծել և մրտադիր մի հիմնականութիւն, որի անուանը իր ժամանակին արձագանք տուեց ձեր բաժնի լրագիրը և ձեր Կ. Պոլսոյ թղթակից Հայկակը, և որը իրաւացի սպասվում է մարմնացած տեսնվել հայ հասարակութեան կողմից։ Գիցուք թէ ինչ ինչ հանգամանքներէն ստիպուած ձեռնհաս չէ եղել մեր անկեղծ ծանուցը արձագանք տալ հասարակական ոգւոյն «Հայոց բարեգործական ընկերութեան» վերաբերմամբ։

Եթէ հասարակութիւնը գումարով ընդհանուր ժողովներում սրբագործեց «Հայոց բարեգործական ընկերութիւն» հիմնելու գաղափարը, ինչ կը նշանակէ ձեր յօդուածի մէջ արտայայտած այդքան սեպագործութիւնը։ Եթէ այդ նրա համար է, որ ձեր առաջարկած «Բարեգործական ընկերութեան» հիմնելը ընդունելութիւն գտնի հասարակութեան կողմից — ձեր նպատակը օտեր է։ Իսկ թէ այլապէս, մեր կարծիքով, դուք զուրկաշատեք որ և ինչ կէտից, ձեր գրածը հաստատուի և մասնաւոր հասարակութիւնը համոզել։

Մեր կարծիքով հայ մամուլին կը վայելէ հետաւում լինի «Հայոց բարեգործական ընկերութեան» կանոնադրութեան հաստատելուն, ամենայն իրանից կախուած միջոցներով և ոչ թէ նոյն իսկ նրա գաղափարը և յիշատակը նսեմացնել հասարակութեան, հետեւապէս և ներքին առաջ, որոնցից կախումն ունի կանոնադրութեան հաստատութիւնը։

Բ. Նաւասարդեան

ՆԱՄԱԿ ՂՈՒԲԱՅԻՑ

Ապրիլի 18-ին

Սուրբ Գարութեան կիրակի օրը ստորագրութիւն բացանելով եկեղեցու բակում յօդուած «Միացեալ ընկերութեան», մեր հասարակ դասակարգի երիտասարդներից հանդանակեցի 62 ր. 50 կ., որից ճանապարհածախսը դուրս գալով մնում է 62 րուր, որ այս նամակին հետ ուղարկում եմ խմբագրութեանը, խնդրելով արդեւ նուիրատուներին ցուցակը և հասցեն փոխը ուր հարկն է։ Ահա նուիրատուների անունները։ Սարգիս խաչատուրեանց 1 ր., Մուրադ Ստեփանեանց 1 ր., Գարութիւն Մեղիւ-Գաղանց 2 ր., Սիմոն Բինրաթեանց 50 կ., խաչատուր Դիւրեանց 50 կ., Գարաիմ Բաղդասարեանց 1 ր., Գաւրիթ Մանասեանց 50 կ., Թովմա Իվանով 30 կ., Սարգիս Բաղդասարեանց 15 կ., Առաքել Աւագով 1 ր., Մարտին Սարգսեանց 1 ր., Բաբայ Բաղդեանց 1 ր., Գարութիւն Գալեանց 50 կ., Ասատուր Աւագով 50 կ., Մինաս Բաբեանց 1 ր., Ղևոնդ Հայրապետեանց 1 ր., Սիակ Ղասապեանց 1 ր., Աթա Համբարձումով 1 ր., Մի ոմն 35 կ., Միքայէլ Տէր-Յարութիւնեանց 40 կ., և Իսրայէլ փարմազին Գովհաննէսեանց 40 կ., Աւագ Բէգլարեանց 20 կ., Ջաքար Տիր-Յովսէփեանց 30 կ., Գարութիւն Իվանով 1 ր., Գանիէլ Բուստամեանց 2 ր., խաչի Տէր-Ղազարով 50 կ., Եսայի Թէոսեանց 15 կ., Աթանէս Պետրոսեանց 50 կ., Մինաս Նապիթեանց 50 կ., Գալովը Խուրլաւով 1 ր., Գովհաննէս Գովհաննէսեանց 30 կ., Միքայիլ Իւրգաշեանց 1 ր., խաչատուր խաչատուրով 40 կ., Գաւրիթ Միլիդեանց 50 կ., Պատուական Բէգլարեանց 1 ր., Բողղան Սալամբէկով 1 ր., Համբարձում Աբրահամեանց 1 ր., Գարութիւն Գովհաննէսեանց 1 ր., Աղամ Մեղիւթեանց 20 կ., Վարդան Վէրդեանց 50 կ., Ստեփան Գեորգեանց 50 կ., Սաւաղ Պետրոսեանց 1 ր., Իսրայէլ Գասպարեանց 20 կ., Ջուշուր Բարեկով 20 կ., Սերոփ Մեկթով 50 կ., Սիակ Բեթթեանց 20 կ., Միլիթի Ամիրջանեանց սիւնեցի 1 ր., Խորշուդ Մնացականեանց 1 ր., Սիակ Կուզնեցով. Խորշով 5 կ., Սերոփ Բարանով 1 ր., Գարութիւն Ակոբեանց 20 կ., Ալեքան Գովհաննէսեանց 1 ր., Ջանկիր 20 կ., Ջաքար Թաթևով 1 ր., Սարգիս Վաքիլով 40 կ., Մնացական Ջաքարով 20 կ., Մոսէս Մինասեանց 1 ր., Սարգիս Շահնազարեանց 1 ր., Միլիթ Բաղդասարով 1 ր., Համբարձում Բաբեանց 40 կ., Սերգէյ Գոլաշով 1 ր., Գեորգ Մարգարով 1 ր., Գաւրիթ Օրդուբէկեանց 20 կ., Միլիթան Գովհաննէսեանց 1 ր., տիրացու Գովսէփ Վաքիլեանց 50 կ., Ներսէս Բանանայ Փիրվերդեանց 1 ր., Համանեցի Մովսէս Տէր-Գովհաննէսեանց 50 կ., Պոլսո Բաբեանց 1 ր., Պետրոս Գովհաննէսեանց 1 ր., Աւետիս Գարութիւնեանց 60 կ., Գրիգոր Նապիթեանց 20 կ., Մարտիրոս Մեկթեղապեանց 30 կ., Իսահակ Մարտիրոսով 40 կ., Գովսէփ Գովհաննէսեանց 50 կ., Խաչ Իվանով 20 կ., Մուսայիլ Գրիգորեանց 1 ր., Եսայի Գրիգորեանց 40 կ., Սարգիս Ջանբաբեանց 1 ր., Սարգիս Բուրով 20 կ., Համբարձում Սովինոսեանց 20 կ., Աղաջան Արութեանց շուշեցի 1 ր., Գարութիւն Ջահրամանեանց 1 ր., Ա. 30 կ., խաչատուր Մեղիւ-Գաղանց 1 ր., Խորշով Գարութիւնեանց 1 ր., Գովհաննէս Տէր-Գալովեանց 62 ր., Իմ անկեղծ և ջերմեանք սրտի շնորհակալութիւնը յայտնում եմ Ղուբայի երիտասարդութեանը, որի սիրտը զարկում է ազգի համար։

Գովհաննէս Տէր-Գալովեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ստացանք «Կարմիր խաչ» ընկերութեան կողմից Կասան բաժնից 46 րուր 50 կոպէկ յօդուած Հայաստանի սովետական ՍՍՀ գումարը հասցած է ընկերութեան Գլխավոր վարչութիւնից, որ իր կողմից ստացել է այդ փողը «Годосъ» լրագրի խմբագրութիւնից, որ անցեալ տարի հաւաքում էր նուիրատուութիւններ յօդուած Հայաստանի սովետական ՍՍՀ-ին։

Ստացվեցաւ Թիֆլիսում Բաֆֆիլի «Իսենթը» անունով վրայաստութիւնը։ Նշանակում է «Մշակ» խմբագրատանը, Կենտրոնական գրադաճանոցում, պ. Ջաքարի Գրիգորեանցի մօտ և պ. պ. Շահինեանցի, Պոզարջեանի, Հովսէփեանցի

ժխախտի մագաղաններով։ Գինն է 1 ր. 20 կ.։ Ստացանք Ջիդիլեարից 20 րուր յօդուած Հայաստանի սովետական ՍՍՀ-ին անձինքներից։ Յակոբ Լեւոնյանց 10 րուր, Առաքել Պետրոսեանց 3 ր., Աստուածատուր Սարգսեանց 7 րուր։ Ընդամենը 20 րուր։

«Новое Время» լրագիրը լսել է որ Թիֆլիսի հնագիտական ժողովը որ լինելու էր ներկայ տարվայ աշնան, յետաձգվում է մինչև եկող 1882 թվուր։

Ապրիլի 30-ից մեզ գրում են Ղուբայից։ «Այսօր իմացայ որ կալանաւորների բանտից փախուտով ժամանակ վրայադրված են եղել 15 մարդ զինուորներից, որոնցից երկուսը ծանր կերպով»։

Մեզ պատմում են որ մօտ օրերս Ներսիսեան զարդի առաջին դաստան երկու աշակերտների Ալեքսանդրեան այգու մօտից անցնելով, գտնում են մի ծրար ներկաւած 225 րուր և զանազան թղթեր։ Նոյն միջոցին այնտեղից անցնող երկու կինտոներ, տեսնելով երեսաների այս արած գիտը, զանազան սպառնալիքներով վախեցնում են մանուկներին և գումարը նրանց ձեռքից յափշտակելով անյայտանում են, մանուկներին ձեռքում միայն թղթեր թողնելով։

Ներկայ համարում տուում են բժիշկ Նաւասարդեանի պատասխանը «Մշակի» 78-որդ համարի առաջնորդող յօդուածին «Բարեգործական ընկերութեան» մասին։ Պարոնի նամակը աւելորդ ենք համարում քննել, միայն ուշադրութիւն ենք դարձնում այն կէտի վրա, որտեղ նա մեզ մեղադրում է թէ մենք մեղ հակառակում ենք։ Կարծել որ մի մարդ կամ մի հասարակութիւն ընդունակ են մի գործի, մի ձեռնարկութեան, իսկ յետոյ դառն փորձով համոզվել որ այն մարդը կամ այն հասարակութիւնը անընդունակ են այն գործի կամ այն ձեռնարկութեան և այդ պատճառով առաջարկել աւելի համեմատ գործ, աւելի փոքր գիւղով ձեռնարկութիւն սկսելու, — ամենին չէ նշանակում իրան հակառակել, այլ նշանակում է գործնական անհրաժեշտութիւնից ստիպված՝ սահմանափակել իր ցանկութիւնները։

«Русский Курьеръ» լրագրին հետագրում են Սմբէնիկ քաղաքից որ այդտեղ կալանաւորված է մի անկայտ անձ որ զիտուորութիւն ունէր սպանել Սմբէնիկի նահանգապետին։

Մարաբաղեանքի լրագիրներում կարդում ենք որ հարաւային Ռուսաստանի մի քանի տեղերի սովորը շարունակում է վարդել հրէաներին և կողպատել նրանց ապրանքն ու կահ-կարասիները։ Մի քանի տեղերում հրէաների դէմ կատաղած ամբողջ այլ ևս իրան չէ կարողանում զսպել և կռիւներ ունի մինչև անգամ իշխանութեան ներկայացուցիչների հետ, ինչպէս այդ պատահել է, օրինակ, Վիկտորովա գիւղում։ Իսկ Կիւնովում ամբողջ ուղեց յարձակվել արական և իրական զինակազանների վրա։ Իշխանութիւնը կալանաւորում է անկարգութիւն անողներին շառախելու։

Մարաբաղեանքի հետգիտեմ սկսում է տարածվել գիւղական ժողովրդի մէջ շատ ունեղիմ ասված աղանդը, որ ուրիշ բան չէ, եթէ ոչ ուստաց աւետարանականութիւն։ Այժմ սենատորները, որոնք վերաբնակութիւն արեցին հարաւային Ռուսաստանում, հետեւել են ասում իրանց զեկուցման մէջ շտուգեղանների մասին։ Շտուգեղանները, ասում է զեկուցումը, բարոյական և ժողովրդ մարդիկ են։ Ռուս մուժիկը, երբ շտուգեղան է դառնում, եթէ նա եղել է առաջ հարող և վատնող դառնում է ժողովրդի և ինչպէս թէ բարոյական և թէ անտեսական կողմից ուստ ազգաբնակչութիւնը բարեբախտ է ընդունելով շտուգեղան աղանդը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՆ

ՅԲԱՆՍԻԱ

Լրագիրները հաղորդում են հետեւեալը։ Իմի ժիրարդէնի թաղմանը ներկայ էին քաղաքական և զրահական բազմութիւն երեւելիներ, որոնց թուումն էին Գամբետտա և Սենայի նահանգի բոլոր պատգամաւորները։ Նահապետ Վրկիլ իր տեղ ուղարկեց զենեքալ Պիտոնին։ Ներկայ էին նոյնպէս Կոնստան, Մանիւն, Տիրտը և Կոշրի մի-նիստները, բազմութիւն պատգամաւորներ և հետեւեալ գրողները։ Դիմա-որդի, Աբու, Դօբէ, Պետիս և Օկտավ Գիլիէ։ Դազաղը կատարեալապէս ծածկված էր բազմութիւն ծաղիկների տակ։ Բազմութիւն պատկեր ուղարկեցան այն լրագիրներից, որոնց հիմնել էր ժիրարդէն։ Թաղման պատարագը մատուցանում էր Սաբատիէ արեղան, որ մահջից առաջ ժիրարդէնի վերջին օրհնութիւնը տուեց։ Հանգուցեային զինուորական պատու տալու համար մի դուռը զօրք

էր ուղարկված։ Յուդարկաւորութիւնը անցաւ արտաքին բուլվարներով մինչև Մօնմարտի գերեզմանատունը, որտեղ ժիրարդէն թաղվեցաւ իր առաջին կին երեւելի Կելֆինա Գէյի մօտ։ Գերեզմանի վրա հինգ ճառեր արտասանվեցան։ Գամբետտայի բարեկամ Սպիլլեր ճառ արտասանեց «Հանրապետական միութեան» կողմից։ Նա զօրեց ժիրարդէնի գործունէութիւնը մայիսի 16-ի կառավարութեան ժամանակ։

Ֆրանսիական յաղաղութեան ընկերութիւնը՝ միաձայն հաւանութիւն տուեց Տունիսի արշաւանքին։ Պախարակելով պատերազմը նուաճող նպատակներով, այդ ընկերութիւնը հաւանում է պատերազմը ինքնապաշտպանութեան համար և վայրենիներին զսպելը, որոնց դէմ իրանց անփական կառավարութիւնը անգոր է լինում։ Գործին այդ տեսակէտից նայելով, իրուժիրները դէմ արշաւանքը կատարելապէս իրաւացի է և անկարելի է մտածել, որ նա եւրոպական խաղաղութիւնը խանգարելու նպատակով է սկսված։ Արշաւող զօրքերից լուրեր են ստացվում յորդաւատ անձերեն։ Իր մասին, որոնք դժուարացնում են զօրքերի ընթացքը։ Հիւանդացած գնեկալ իրտերի տեղ նշանակված է Գերդեր, որ նոյնպէս էլզացի է։ Թիւրքաց գնապնը փարիզի մէջ հաղորդեց Բարտեիմի Սենտ-Իլյերին Բ. Կրան նոր շրջաբերականը, որ ցոյց է տալիս սուլթանի գերիշխանական իրաւունքները Տունիսի վրա և հրաւիրում է Ֆրանսիական կառավարութեանը Տունիսի գործերի մասին սուլթանի մինիստրեն։ Հետ բանակցելու Յայնի է, որ այդ շրջաբերականին Ֆրանսիական արտաքին գործերի մինիստրը տաւջկայ պատասխանը կը տայ, թէպէտ Բ. Կրանը սպաւնում է այդ հարցը պետութիւնների ընկութեանը յանձնել։ Կեֆ քաղաքի զօրքերի հրամանատար Ֆրանսիական զինապետը ընդունեց տեղական շէյխների և կադիների հպատակութիւնը։ Պաշարների հարկաւոր եղած ժամանակ ստանալով ապահոված է։ Հարաւային Օրանի մէջ ոչ մի կռիւ չէ պատահել և ժերիկիլի զօրքերին յարձակումն չէ բապտնացել։ Շրջակայ ցեղերը բացի երեք ապստամբածներից հանդիստ են։ Ֆրանսիային հաւատարիմ մնացած Սայիդի աղայի և Տրաֆի ցեղի մէջ կռիւ է պատահել որի ժամանակ առաջինը 30 մարդ է կոչեցել։ Երկրորդի կորուստները աւելի մեծ են եղել։

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

Փարիզ, 2 մայիսի

Արդէն «Մշակի» ընթերցողներին յայտնի է որ պարոն Էմիլ դը-Փիրարդէնը վախճանվեց ապրիլի 27-ին և թաղման հանդէսը նշանակված էր մի և նոյն ամսի 30-ին շաբաթ օրը։ Այն օրը արդէն ժողովուրդը խառնվել էր ժամի իննսին Լապերուզ կողմից փողոցում ննչեցեցալ տան առաջ։

Հանգուցեալի դրան ճակատը զարդարված էր սե մահազով բուրած արծաթեայ փայլուն ծոպով։ Կազմող դրած էր առաջին յարկի մի լայնատարած դահլիճում չըսպատած այրվող ահազին մեղրամոմերով և անուշահոտութիւն բուրդ խնկանթներով։ Գարնանային գեղեցիկ ծաղիկներից բուրած պսակների և փունջերի, Էմիլ դը-Փիրարդէնին վերաբրութեամբ, քանակութիւնը այնքան շատ էր, որ դազաղը բուրդով ծածկված էր։ Այս բուրդը ուղարկված էր զանազան ընկերութիւններին և խմբագրութիւնների կողմից, որ սակներից մէկը իր անշափ մեծութեամբ որ բուրդի ուղարկութիւնը դարձնում էր իր վրա՝ ուղարկված էր նոյն իսկ «Լա Ֆրանս» լրագրի խմբագրութեան կողմից։ Արդէն տասը ժամ անցած՝ դեռ այցելուները գալիս էին շարունակաբար վերջին յարգանքը մատուցանելու հանգուցեալին և սպաւոր ընտանիքը միմիկարելու։ Այցելուների թիւը այնչափ շատ էր, որ վեց տեսակներ ծածկվեցան անուշահոտով և սովորվեցան նորից չորս տարակ դնել սեղանի վրա։

Լայնատարած դահլիճը, որտեղ դրված էր դազաղը, արդէն լիքն էր ժամի տասն և կէսին նշաւաւոր մարդկեանցով, որոց մէջ էին պ. Գամբետտան, ներքին և արտաքին գործոց նախարարները, միայն հասարակապետութեան նախագահ Ժիւլ-Գրէվին իր փոխանակ ուղարկել էր զենեկալ Պիտոնին (Pittie)։

Փարիզում եղող բոլոր դէպուտատների մեծ մասը այնտեղ էր, ներկայ էին զանազան նմանա-

պէս նշանաւոր հեղինակներ, ինչպէս Ալեքսանդր Գլաճաճ-Ֆրան, Ժիւլ-Սանդո և այլն:

Տասնութէն ժամից քառորդ պակաս լավից զին-
ւորական նուագարանի ձայնը, որին հետեւում էր
մի բառալիւծ գործ իր դրօշակով կոյտնէլ Վինիւ-
րի—Vignur—առաջնորդութեամբ: Մի քանի րո-
պէից յետոյ զազաղը զրկեց յուզարկաւորութեան
կառքի վրա և ընթացեց սկսելից դէպի
Շայո անուանված եկեղեցին: Կառքին հետեւում
էին հանգուցեալի ընտանիքը, դէպուտատները,
La France լրագրի ամբողջ խմբագրութիւնը և
անագին բազմութիւն զինուորական երկու շարքի
մէջ առած մինչև վերոյիշեալ եկեղեցին: Եկեղե-
ցու մէջ մասն միայն ստանալ ունեցողները,
պատարագից յետոյ յուզարկաւորութեան կառքը
զինեց զէպի Մօմմարի գերեզմանատունը անց-
նելով Նիսեսան դաշտի միջով: Գերեզմանատանը
պարտն Սպիւլէր կարգաց դամբանական ճառ,
որում նկարագրեց կարծօրէն հանգուցեալի կեն-
սագրութիւնը և մատուցած օգտակար ծառայու-
թիւնները իր սիրելի հայրենիքին: Տիրանիային
այս ճառախօսութեանը ամբողջ պատասխանում
էր անընդատաբար բռնած ծափահարութիւնը:
Արանից յետոյ խօսեց պարտն ժամատի—Jenty—
փրքիկ օրագրի—Petit journal—և մի քանի այլ
անձինք:

Բոլոր ճառախօսութիւնից յետոյ դադարը զըն-
կեցաւ գերեզմանի մէջ և ժողովուրդը ցրվեցաւ
ափսոսալով այսպիսի մի նշանաւոր և մի նոյն
ժամանակ օգտակար մարդու կորուստը:

Նամակս վերջացնում եմ հետեւել լուրով:
Փոստի կառավարութիւնը կամենում է նամակ-
ների վրա նշանակված գները պակսեցնել: Մին-
չև այժմ մի նամակ ուղարկելու համար ամբողջ
Ֆրանսիայում արժէր տասնութ շնորհ, իսկ
արտասահման ուղարկելու համար քսանութ շնորհ
սանտիմ: Շատ ցանկալի է, որ այս միտքը իրա-
կանանայ և ժողովրդի համար բնուց փոքր ինչ
թիւթեանայ: Ուրիշ ոչինչ չը լինի, նոյն իսկ փո-
ստի կառավարութիւնը աւելի պիտի օգուտ քաղի
քան թէ առաջ. որովհետև և ստատիստիկով ա-
պացուցեց փոստի կառավարութիւնը, որ այն օ-
րից, երբ մի քանի տարի առաջ պակսեցրեց նա-
մակների վճարը, աւելի շատ նամակներ ուղարկ-
վեցան և հետեւապէս փոստը մեծ օգուտ ունե-
ցաւ: Պէտք է գիտենալ՝ որ հեռագրի մասին մի
և նոյն միտքն են յայտնում:

Լանդիշ

ՆԱՄԱԿ ԹԻԻՐԻՔԻՍՏԻՑ

Կ. Պոլսի, 18 ապրիլի

Աւելորդ չեմ համարում մի քանի տեղեկու-
թիւններ ևս աւելացնել անցեալ անգամ ձեզ
տուած հաղորդութիւններին: Գլխաւոր մա-
սին Գլխաւորի նոր եկածները պատմում են մեր
ամենքի ուրախութեան համար թէ՛ Հայաստանի
այդ կենսաբանական քաղաքի ազդեցութիւնը այն-
չափ է սկսել մեծանալ և բարոյապէս նուաճել
քերթերին, որ նորա երբեք այնչափ հաւատար-
մութեամբ և եռանդով ոչ մի տեղ և ոչ մի ժա-
մանակ չեն ծառայած հայրենի, ինչպէս այժմ
գլխաւորի արուեստագործները: Այդ քաղաքացի
մի հայ կաթիլի եպիսկոպոս, որը նոր է եկել
այստեղ հասունեանների և հակահասունեանների
գործի պատճառաւ, ինչ ասում էր թէ Սեբաս-
տիայի վիլայեթի քերթերը սաստիկ ուրախա-
ցել են գլխաւորիներին արած գիւտով, որով-
հետև մինչև հիմայ չը կարողանալով իրանց ոչ-
խաղաղ մի արդիւնք ստանալ, այժմ հանդիստ
են, որ իրանց ապրանքը և նորան պահելու ու
պահպանելու աշխատութիւնը դուր չի կորչի:
Քերթը բեգերը սկսել են ամենամեծ պատու-
վերաբերվել դէպի հայերը և խաղա պատմում
են իրանց ստորագրեալ այն քերթ հովիւներին,
որոնք լաւ չեն հովովում որ և ինչ գլխաւորի
արուեստագործի ծոցերը: Շնորհիւ այսպիսի հա-
մարախութեան հենց այս րոպէս զեռ գլխ-
աւորիներին սեփականութիւնը սնցել է մօտ եր-
կու հարիւր հազար գլուխ ոչխար նոյն եպի-
սկոպի վկայութեամբ: Այժմ թիւը հասկանա-
նալի: Պոլսի մէջ «Լոյս» արդարեւորները թէ ինչի
մէջ պիտի կայանայ այդ Լոյսը Հայաստանը փը-
կելու համար՝ վերացական ցնդաբանութեան թէ
զրական կուլտուրայի, այսինքն, արհեստի, ա-
րուեստի ու վաճառականութեան: Այսպիսի Լոյ-
սով միայն հայ տղամարդը կենթարկէ իրան
ազդեցութեան իր մուսուլման հայրենակիցնե-
րին, այսպիսով միայն հայ կրնը կազաւորել քեր-
թեր և չեղեղներ իր անհատութիւններից նոցա
հացը ու ապրուստը իր ձեռքի մէջ պահելով:

Եթէ հենց դիցուք գլխաւորիների վերաբե-
րում առաջի անգամ մի քանի անհատութիւն-
ներ էլ պատահին բարբարոսների կողմից, բայց
զարմեալ կարելի է վստահ լինել որ այդ բար-
բարոսները չեն լինի ու գազաններից էլ ստոր չեն,
որը իրան հաց է տալիս... Հաց ու ապրուստ
տալով կարելի է լինի միայն զինաթափ անել
Հայաստանի բոլոր այժման տանջողներին, մա-
նաւանդ որ այդ տանջողները արդէն դուր փո-
քից համոզվեցան, որ հայերին կողոպտելով
վերջապէս իրանք էլ կը սկսեն սովից ստալելու:
Վասնորոյ տեսնելով իրանց համար ուրիշ դուր-
թիւն հայերի մէջ արուեստների ծաղկելով, նոքա
կամաց կամաց, անհկատելի կերպով կը փոխվեն
ու մի երկու տասնեակ տարվայ մէջ կը ձուլվեն
հայերի հետ: Ինչպէս ապացոյց ասածիս կարե-
ւի է բերել այն, որ հենց այս րոպէս, զեռ ըսկը-
բում ևս ոչ միայն Գլխաւորի մէջ խմբված կո-
նաքածան հայերն են միանգամայն եղբայրա-
ցած, այլ և բազմութիւն տաճիկ ու քրիստոն-
քացի մէջ չեն խօսում ևս հայերի հետ բացի հայե-
րէնից, նոցա սիրտը չարհու համար: Եթէ սկիզ-
բը այսպէս է, կարող էք երեւակայել վերջը:

Չարմանալի մի բան ևս. Գլխաւորի տանջա-
կում ոչ մի մարդ չը կայ այժմ, որ երկրագոր-
ծութեամբ պարագլխի, այլ ամենքն էլ այնչափ
կարողանում են ապահովել արուեստագործնե-
րից, որ ցորենը պատրաստ են առնում, ուրիշ
գործը ինչպիսի կերպով, ինքն ըստ ինքան ըն-
կել է ընկալած իր քաջաման ամենականոնա-
ւոր ճանապարհի վրա, այսինքն, մի տանջալ պա-
րագլխում է լոկ մի բանով, իր կենսական ու-
րիշ պիտոյքների հոգսը թողնելով մնացած մօ-
տակայ տանջողների պարտաւորութեան վրա:
Ուրիշն այս փրկարար օրինակով իր քաջանչիւր
վիլայեթ կամ տանջալ կարող է փոքր առ փոքր
յառաջանալ այն արհեստի ու արուեստի մէջ,
որի համար յարմարութիւններ են ներկայաց-
նում տեղական բերքերը, օրինակ Կեսարիան
կամ Եփեսոսը կարող է յառաջ տանել ներկա-
ւորութեան գործը ինչպէս և իսկապէս կանաչը
սկսել են Կեսարիայի մէջ այդ մասնագիտու-
թեան վրա ամփոփել իրանց ուղարկութիւնը
գլխաւորիների կանանց աշխատութեան կատա-
րկագործված գոյնը ու ներկեր հասցնելու հա-
մար:

Բայց միթէ վիլայեթի Հիւսիսի բոմաններով
«Լոյս» վրա խօսող Կ. պոլսեցի մէկը կարող է
մինչև հիմայ ևս հասկանալ և գնահատել դրա-
կան կուլտուրայի այս մեծ և փրկարար
նշանակութիւնը: Հեռու չը գնանք, վեր առ-
նենք Կ. Պոլսի մէջ ամենաշատ հոգալի մի «գլխ-
աւոր» հայ կին, որը ֆրանսիական և անգլ-
լիական մատենագրութիւնը գիտէ իր հինգ մա-
տերի պէս. հասկացե՛ք նորան, եթէ կարող էք,
թէ ինչ սակ է դրա կան կուլտուրա. նա
ձեզ դուցէ Սիբիրից եկած արջի մէկը ընդու-
նէ, երբ դուք նորա հետ կը խօսեք արհեստի
ու արուեստի զարգացման վրա, ինչպէս ազգի
ներկան և ապագան փրկող ֆալկոտիներին վրա:
Այսպիսի մէկը հենց իմ երեսուն էր ասում թէ
նա այն մարդ, որը կը սկսէ նշանակութիւն տալ
այսպիսի ստոր բաներին, ինչպէս գլխաւորի
կանանց այժման գործն է. ինչպէս կարելի է
առանց «Լոյս» ու վիլայեթի Հիւսիսի ճանաչելու
աշխարհիս մէջ մի բան յառաջացնել. ինչպէս
կարելի է առանց ոտանաւոր գրելու ու գրաբար
իմանալու մի «վայելուչ» բանի ընդունակ լի-
նել. ինչպէս կարելի է վերջապէս առանց հայ-
րենապարկական հոգով չարագրած երգերը եր-
գելու հայրենիք սիրել:

Տղամարդ փիլիսոփաներից մէկը, որը իրան ա-
մեն բանի մէջ միակ հեղինակաւոր մարդը կը
համարէ ամբողջ ազգի մէջ (ինչպէս և իւրա-
քանիւր պոլսեցի) ինչ ասում էր նորբա-
ւոյնը գիտե՛ք թէ ինչ սակ է Ֆուլիլի թէ դուք
միայն լսած էք կոր թէ Ֆուլիլի կայ, բայց ընա-
տեան չէք նորան. ևս եմ տեսած, ևս կարող
եմ խօսել միայն ֆուլիլի մասին: Եւ ինչ յայ-
տնվեց վերջապէս նորա տեսանքի. թէ յիշաւ
այս օրերս միայն Վանի ֆուլիլի արժէքը
քիչ ընկել է մասամբ քաղաքական պատճառներով,
մասամբ էլ այն պատճառով, որ սնդիկայից մի
քանի տարի առաջ մի քանի հազար ֆուլիլի
այժմ տանելով Աւստրալիա, այնչափ են շա-
տաղել նոցա, որ Հայաստանից տարած ֆուլիլի-

ները սկսել են մրցել Աւստրալիայի իրանց նա-
խահարց հետ, վասնորոյ առ ժամանակ ընկած է
Կ. Պոլսի վաճառանոցում վանի ֆուլիլիների ար-
ժէքը. չը նայելով որ Կիւլպէնկեանները և միւս
շատ վաճառականներ առնում են մեծ քանակու-
թիւն այդ բուրդից, վստահ լինելով բուրդի ար-
ժէքը չուտով կրկին բարձրանալու վրա: Ու-
րիշն ինչու դուք չէք խօսել իր ժամանակին և
չէք խօսում այժմ ևս, որ հայերն էլ իրանց կող-
մից իսպանական միլիոններ բերեն Հայաստան
իսկական միլիոնների հետ մրցելու համար, այլ
այդ կզական դէպքից ուղում էք յառաջ բերել
այն պրինցիպը թէ Հայաստանի մէջ արուեստ-
ներով պարագլխի արդիւնքները չեն, նկատեցի
ևս շատախօս փիլիսոփային: Միայն կարողա-
ցաւ կցկոտր բաներ բարձրացնել, այնչափ հե-
տամուտ լինելով ու հասկանալով արուեստների
ոյժը ու նշանակութիւնը, որչափ և վերոյիշեալ
Կ. Պոլսի կանանց մէջ հանձար և մայրերի նա-
խադարձ համարված տիկներ:

Երբ ևս գրաւորեց հանելով մի բուռ նմուշ-
ներ Գլխաւորի գործունեւորից ցոյց տուցի նը-
րանց. «Հա՛ն սա պիտի լինի մեր Լոյսը» ասելով,
մեր պոլսեցի փիլիսոփան ու կին-մատենագիրը
բերանները բաց մնացին, երբեք բնաւ չը կար-
ծելով թէ Գլխաւորի հայուհիք առանց իրանց
զրած տառնաւորները ու վկայանութիւնները
կարգաւ, կարող են կապիկներէից աւելի բարձր
արարածներ լինել... Վերջը փայլուն իրողու-
թեան տպաւորութեան տակ մի ժամ առաջ վի-
ճաբանող մեր փիլիսոփաները սկսեցին յափշտակ-
վել արուեստով ու «արուեստ, արուեստ» աղա-
ղակել: Բայց միթէ սոցա հաստատաւորութեան
վրա կարելի է յոյս դնել, երբ Կ. պոլսեցու հա-
մադուհներ կախված է միայն Բոսֆորի վրայից
փչող քամու ուղղութիւնից:

Գրիգոր Նիկողոսեան

ԽԱՌՆ ԼՈՒՐՆԵՐ

Ֆիգարո լրագրի մէջ հետեւել տեղեկութիւն-
ներ ենք կարում Նաիլ զը Ժիրարդէնի մասին.
նրա թուրք, կարող զը Ժիրարդէնի նշանակվեցաւ
զլիւսաւոր ժողովուրդի, իսկ որդին, Ալեքսանդր Ժի-
րարդէն, կառավարատու, և որդուն իրաւունք է
արված օգտվել թողած ժողովուրդից մինչև
առաջինի չափահասութիւնը: Տիկին Գլխաւորաւ,
Ժիրարդէնի եղբոր աղջկան կտակված է նրա
հեղինակական իրաւունքի մի փոքր մասը, իսկ
պ. Գլխաւորային հանգուցեալի թղթերը և գրե-
թի մի մասը: Մի քանի անշնան բաներ կտակ-
ված են տիկին Ֆուլիլին, տիկին զը-Լուսինին ու
մի քանի բարեկամներին: Տան բոլոր ծառաները
պէտք է ստանան ամբողջ տարվայ ռոճիկը, իսկ
Ժիրարդէնի զլիւսաւոր ծառան 10,000 ֆրանկ:
Կտակի մէջ բնութիւն չէ յիշուած տիկին զը
Ժիրարդէնի, հանգուցեալի կնոջ ու նրա աղջը-
կայ մասին, որին նա երբեք իր որդի չէր հա-
մարում. այնպէս որ նրա այրին կը ստանայ
միայն այն մասը, որը կը նշանակէ նրան դատա-
բանը: Իսկապէս Նաիլ զը Ժիրարդէնի ամբողջ
հարստութիւնը կը ժողովանգէ նրա թուրք:

Խաղաղ թագուհի Մարգարիտա, մօտ օրերս
պատահեցաւ մի փոքրիկ աղջկան, որը թագու-
հու մօտով անցնում էր: Թագուհին երեխային
ձեռքից բռնելով հարցեց նրանից՝ նրա անունը
ու տարիքը: Իմ անունը Աննան է և ես ութ
տարեկան եմ: Ով է հայրը, շարունակեց թա-
գուհին: «Հանրապետական» պատասխանեց
փոքրիկը հպարտութեամբ:

Խաղաղութիւնը այս օրերս սպանական մի դիպ-
ւածով սպանում Զրամանիայի դեպքին, աղմու-
կալ Ժարին հանդիպելով մարշալ Բադենին,
իսկոյն թողեց զայնից չը կամենալով գտնվել
«հաւաճանի» հասարակութեան մէջ: Ժարին
այդ վարմունքը չը մնաց առանց հետեւներ.
Բադենը իրան վերաբերված համարելով լարեյի
վարմունքով, աղմկաւոր բաւականութիւն պա-
հանջեց. բայց ի նկատի ունենալով որ Բա-
դենը մինչև այժմ էլ «յանցաւոր» է համարվում,
Ժարին աւելորդ համարեց մինչև անգամ պա-
տասխանել նրան: Զրամանիական լրագրութիւնը
առհասարակ համարեց թագուհու վերաբերված
դէպի դուրսերը, բայց այս դէպքում լրագրի-
ներն էլ համաձայն են որ աղմկաւոր ուրիշ
կերպ վարվել չէր կարող:

Կոմս Զամբոնո, Լուսնի և Ուլպալ քաղաք-
ների համալսարանների կանցլերը և գլխաւոր
գաղապան բարեգործական հիմնարկութիւնների
ճիւղիկայում գրկված է իր լոյս պաշտօններից
կեղծ մուրճակներ չինելու պատճառով: Զամբ-
ոնը ունէր բանկերի հետ այնքան մօտ յարա-
բերութիւններ, որ նրան դուռը չէր մեծ դու-
մարների մուրճակներ ներկայացնել բանկերում,
առանց աւելի տալու կտակաւոր նրանց իսկա-
կանութիւնը: Պատահեց որ իսկ այն ժամանակ
երբ կոմսը հիւանդ էր, նրա մուրճակներն էլ

ժամանակամիջոցը լրացաւ և չը կամենալով նը-
րան անհանգստացնել բանկը դիմեց նրա նախ-
նաւորներին. բայց դուք յայտնեցին որ այդ
ստորագրութիւնները—իրանց չեն, այլ կեղծ են:
Այդ իմանալով բանկերում սկսեցին կասկածել և
նայն իսկ Զամբոնոն ստորագրութեան իսկական-
ութեան մասին, որովհետև նրանց մտքով էլ
չէր կարող անցնել որ այդ խաբարայութիւնը
կոմսը լինի արած: Բայց մի քանի ժամանակից
յետոյ յայտնվեցաւ որ ոչ թէ միայն այդ մուր-
ճակը, այլ և ուրիշ շատ կեղծ գովաւորանքներ
պատրաստված են եղել իսկ կոմսի ձեռքով: Բո-
ւորին յայտնի էր որ կոմսը իր ունեցած հա-
րստութիւնը վաղուց թղթախաղի մէջ վատ-
նած էր և որ նրա պարտքերը շատ անգամ բա-
րեկամներն էին վճարում, բայց դարձաւ նրան
հաւատում էին և մինչև անգամ մեծ գումարներ
յանձնողներ էլ կային: Անվերադառնալի կորստն
և այն 80,000 կրօն, (չվեղական դրամ) որ նա
հաւաքել էր մի աղջկային արձան կանգնեցնելու
համար: Մի տիկին էլ յանձնել էր նրան 20,000
կրօն և այժմ մնաց առանց մի կօպէկի: Ասում
են որ կոմսը իր նպատակներին հասնելու հա-
մար ի չար էր գործ դնում շատ նշանաւոր ան-
ձինքների անունները: Եվ ինչպիսի հասարակու-
թեան մէջ այդ սկանդալը շատ վատ տպաւորու-
թիւն արաւ: և կոմսի հարուստ ազգականները
մեծ ուրախութեամբ բոլոր կորուստները իրանց
փողով կը լրացնէին, միայն թէ այդ գործը հա-
պարակապէս չը յայտնվէր: Բայց այժմ ոչ է
արդէն:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

Մ Ի Ջ Ա Ջ Գ Ա Յ Ե Ն Ը Ն Կ Ե Ր Ո Ւ Թ Ե Ն Ի Ց

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 մայիսի Մայիսի 4-ին
Եկատերինան ջրանցից քարէ կամարձի
մօտից հանված են գուտապերէ երկու բար-
ձեր, որոնք լցված էին 126 ֆունտ սե զի-
նամիտով: Ոչ հրկիւններ կան և ոչ անցքեր:
Երէկ չեղեցօրիական պատգամաւորութիւնը
արծաթէ պսակ դրեց 'ի Տէր Հանգուցեալ
Կայսրի գերեզմանի վրա: Երէկ պարսկական
սրտաքոյ կարգի զեպանութիւնը ուսուց
չքանչաններ ստացաւ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 մայիսի: Հրատարակ-
ված է ներքին գործերի մինիստր կոմս Իզ-
նատիլի շրջաբերականը նախագագեանե-
րին, որով յայտնվում է, թէ կառավարու-
թիւնը ամենից առաջ կաշխատի արմատա-
խիլ անել խառնակութիւնը երկրի հասա-
րակական ոյժերի մշտական օգնութեամբ և
զրա համար կառավարութիւնը կառաջա-
դրի հարկաւոր միջոցները: Ազնուականու-
թեան, զեմտօփի և քաղաքային դասակար-
գերի իրաւունքները անփոփոխ կը մնան:
Գլխաւորների վիճակը կարելութեան չափ
կը թելթեացնվի և կը բարելաւվի նրանց
հասարակական կազմակերպութիւնը և տըն-
տեսական դրութիւնը:

Պ. ՊՈԼԻՍ, 5 մայիսի: Սուլթան Աբդուլ-Ազի-
զի սպանման մասին քննութիւնից յայտնվել
է Միտհադ-փաշայի մասնակցութիւնը այդ
սպանմանը: Նա ապաստանվեցաւ Զմիւռնիայի
Ֆրանսիական դեսպանատան մէջ: Միտհադ-
փաշա արձակված է իր պաշտօնից, նրա
տեղ նշանակված է Ալի-փաշա: Գաղտնաւոր-
նական մասնաժողովը Զմիւռնիա ուղեւորվե-
ցաւ Միտհադից ցուցումներ ստանալու հա-
մար:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 6 մայիսի: Պետական
բանկի 50% տոմսեր առաջին շրջանի ար-
ժէ 96 ռ. 75 կ., երկրորդ 94 ռ. 25 կ.,
երրորդ 94 ռ. 50 կ., չորրորդ 94 ռ., ներ-
քին 50% առաջին փոխառութեան տոմսեր
արժէ 222 ռ. 75 կ., երկրորդ 215 ռ. 50 կ.,
արեւելեան առաջին փոխառութեան տոմսեր
արժէ 92 ռ. 62 կ., երկրորդ 92 ռ. 87 կ.,
երրորդ 92 ռ. 87., ուսի 8 ռ. 5 կ.: Ռու-
սաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 24.25
պէնս, Ամստերդամի վրա 123 պէնս, ուս-
աց 100 ռ. Համբուրգի վրա արժէ 208
մարկ 50 պֆ., Փարիզի վրա արժէ 256
ֆրանկ 25 սանտիմ: Բօրսայի արամադրու-
թիւնը թոյլ է:

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

